գ/ 3-րդ չափաբաժնի մասով՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Զարտպրինտ>> ՍՊԸ-ին, 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Արման Ասմանգուլյանին,

դ/ 4-րդ չափաբաժնի մասով <<Զարտպրինտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսակա հատկացումների չափը,

ե/ 5-րդ չափաբաժնի մասով՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Արման Ասմանգուլյանին, <<Զարտպրինտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսակա հատկացումների չափը,

զ/ 6-րդ չափաբաժնի մասով՝ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Լեգալ պլյուս>> ՍՊԸ-ին, 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ա/Ձ Արման Ասմանգուլյանին, 3-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<Տիգրան Մեծ>> հրատարակչություն ՓԲԸ–ին, <<Զարտպրինտ>> և <<Միսմա>> ՍՊԸ-երի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսակա հատկացումների չափը,

է/ 7-րդ չափաբաժնի մասով <<Միսմա>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսակա հատկացումների չափը:

Քանի որ 4-րդ չափաբաժնով ներկայացված տպագրական աշխատանքի մասով <<Զարտպրինտ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսված ինքնարժեքը, իսկ 7-րդ չափաբաժնով ներկայացված տպագրական աշխատանքի մասով <<Միսմա>> ՍՊԸ-ի կողմից նախատեսված ինքնարժեքը գերազանցում է նշված տպագրական աշխատանքների գնման համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, ինչպես նաև հրավերի 4-րդ կետի 4.1 ենթակետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշեց նշված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ բանակցություններ չվարել և նշված չափաբաժինների մասով մերժել վերջիններիս հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

**7. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**.

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

**8. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

- գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 02.09.2016թ. ժամը $10^{00}$-ին, ք. Երևանում, Փիրումյանների 9 հասցեում, <<Արդարադատության ակադեմիա>> ՊՈԱԿ-ի շենքում, խորհրդակցությունների սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովի՝

նախագահ Ռ. Ղառնդյան

անդամներ Է. Արիստակեսյան

Մ. Համբարձումյան

քարտուղար Ս. Ծատինյան